Լ. Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՍԻՄԵՈՆ ԵՎ ԵՐԵՄԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ «ՀԱԿԱԹՈՌՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐԸ 17-ՐԴ Դ. ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

XVII դ. երկրորդ կեսին Հասան-Ջալալյանների կաթողիկոսության ժառանգականության ավանդույթը խախտվեց: 1653 թ. Գանձասարի կաթողիկոս օծվեց Հասան-Ջալալյան տոհմին չպատկանող Պետրոս Խանձքեցին՝ Կաթողիկոսական Աթոռին բազմելու համար 1652 թ. դառնալով Հասան-Ջալալյան Գրիգոր Կաթողիկոսի որդեգիրը և ստեղծելով այդ տոհմի երևութական անընդհատություն[1]: Որդեգրման այդ ակտով նա պարտավորվում էր իր մահից առաջ Գանձասարի կաթողիկոս օծել միայն Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչի: Վարդան Օձնեցին գրում է, որ նա կատարում է այդ պարտավորությունը և մահից առաջ, 1674 թ., կաթողիկոս օծում Երեմիա Հասան-Ջալալյանին, սակայն Գանձասարի Կաթողիկոսական Աթոռի նկատմամբ Հասան-Ջալալյանների ժառանգական իրավունքների վերականգնումն ընդդիմություն է առաջացնում ինչպես Գանձասարի վանքի միաբանների, այնպես էլ Կաթողիկոսության բարձր հոգևորականության շրջանում, որոնք բացահայտ կերպով հանդես են գալիս Հասան-Ջալալյան Երեմիայի թեկնածության դեմ:

Վարդան Օձնեցին իր Պատմության մեջ գրում է, թե Գանձակի և Բարդայի առաջնորդները, չճանաչելով Երեմիայի կաթողիկոսական իրավունքները, նույնիսկ «կամեցին առանձին ունիլ զթէմս իւրեանց անկախ ի կաթուղիկոսացն յԱղուանից եւ Էջմիածնայ»[2]: Երեմիա Կաթողիկոսը, այս ընդդիմությանը վերջ տալու նպատակով, կաթողիկոս դառնալուց մեկ տարի անց կաշառքով Գանձակի և Բարդայի խաներից հրովարտակներ է ձեռք բերում, որոնցով խաները նրան կաթողիկոս են ճանաչում՝ հրամայելով իրենց իշխանության տակ գտնվող հայերին հնազանդվել նրան[3]:

Վարդան Օձնեցին գրում է. «Յետ չորս ամաց կաթուղիկոսութեան տէր Երեմիայի հաճեալ զկամս Բեկլար բէկին Բարդայու, Սիմէօն եպիսկոպոս՝ առաջնորդ Բարդաբասանու* եւ Ջրաբերդու ի թուին հայոց ՌՃԻԳ (1674) օծաւ հակառակ Աթոռ կաթուղիկոս Աղուանից»[4]: Այստեղ «յետ չորս ամաց»-ը վրիպակ է, պետք է

---

[1] Վարդան Օձնեցի, Պատմութիւն Հայոց: Մատենադարան, ձեռ. № 4331, թ. 10ա-10բ:

[2] Նույն տեղում, թ. 11բ:

[3] Նույն տեղում:

* Բարդաբասանը գավառակ է Արցախում, տարածվում է Ջրաբերդի գավառից արևելք (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Երևան, 1986, էջ 620):

[4] Վարդան Օձնեցի, Պատմութիւն Հայոց: Մատենադարան, ձեռ. № 4331, թ. 12:

լինի «յետ չորս ամսոց», քանի որ Վարդան Օձնեցին վերը նշում էր, որ Երեմիան կաթողիկոս է օծվել 1674 թ.:

Փորձենք պարզել այս մութ պատմությունը՝ դիմելով այլ աղբյուրների օգնությանը:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 8965 ձեռագիր Ավետարանի հիշատակարանը քննարկվող հարցի վերաբերյալ լրիվ հակառակ տեղեկություններ է տալիս: Ըստ այդ հիշատակարանի, Պետրոս Կաթողիկոսը 1675 թվականին, մահից առաջ, կտակով Գանձասարի Կաթողիկոսական Աթոռը հանձնում է իր աշակերտ Սիմեոնին, որ չէր պատկանում Հասան-Ջալալյան տոհմին: Սիմեոնը, Պետրոս խանձքեցու վախճանվելուց հետո, «կամակցութեամբ ամենայն մեծամեծաց տանս Աղուանից», օծվում է Գանձասարի կաթողիկոս և, մեկնելով Ղազվին, միաժամանակ հաստատվում Գանձասարի կաթողիկոս և՛ Սուլեյման շահի հրովարտակով, և՛ այդ ժամանակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու կոնդակով[5], որը, հալածվելով Երևանի Սեֆի-Ղուլի խանի կողմից, ապավինելով շահի արդարադատությանը, 1673-75 թթ. գտնվում էր Սպահանում[6]: Այս հիշատակարանը միակ աղբյուրն է, ըստ որի Սիմեոն Կաթողիկոսը Հակոբ Ջուղայեցուց հաստատման կոնդակ է ստացել, մինչդեռ Սուլեյման շահի՝ Երեմիային Գանձասարի կաթողիկոս հաստատելու հրովարտակում ասվում է, թե Երեմիան, ներկայանալով շահին, հայտնել է, որ իր հորեղբայր Գրիգոր Հասան-Ջալալյան Կաթողիկոսի մահից հետո իր անչափահաս լինելու պատճառով կաթողիկոս է դարձել Պետրոսը, որը, դեռ իր կենդանության օրոք, կաթողիկոսությունն իրեն է հանձնել: Երեմիան շահին ներկայացրել է Աղվանքի հայ իշխանների համախոսականը, որով նրանք հայտնում էին, որ Գանձասարի կաթողիկոս են ճանաչում Երեմիային և «երախտապարտ են» նրան: Շահը բավարարել է Երեմիայի խնդրանքը և նրան «Նապաստակի տարվա սկզբից» հաստատել Ղարաբաղի, Գանձակի և Շամախու կաթողիկոս: Հրովարտակը տրվել է Հիջրայի 1086 թ. սաֆար ամսին (1675 թ. ապրիլի 27 - մայիսի 26)[7]: Այս հրովարտակից հետևում է, որ Երեմիան իր հորեղբոր մահից հետո Պետրոսի՝ Գանձասարի կաթողիկոս դառնալու փաստը պատճառաբանում է իր անչափահասությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի վրա գոյություն ունի հետևյալ բովանդակությամբ արձանագրությունը. «Շինեցաք զսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգւոց մերոց ննջեցելոց ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի... Թուին էր ՌՃԴ (1655)»[8]: Այս արձանագրությունից հետևում է, որ Երեմիան Աղվանից Հայրապետ է կոչվել Պետրոսի կաթողիկոսության ժամանակ:

---

[5] Մատենադարան, ձեռագիր (այսուհետև՝ Ձեռագիր) № 8965, թ. 361 բ:

[6] **Աշ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք երկրորդ: Երևան, 1959, էջ 158-161:

[7] Մատենադարան, Կթղկ. դիվան (այսուհետև՝ Կթղկ. դիվան), թղթ. 241, վավ. 201, **Սարգիս Ջալալեանց**, Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1853, էջ 491-492:

[8] Դիվան հայ վիմագրության (այսուհետև՝ Դիվան), Արցախ, Պրակ V: Երևան, 1982, արձանագրություն 494, էջ 145-6:

Երեմիան շահին է ներկայացնում Աղվանքի հայ իշխանների՝ իր անունով մուջալա-համախոսականը, սակայն նրա այն պնդումը, թե Պետրոսն իր կենդանության օրոք Գանձասարի Կաթողիկոսական Աթոռը հանձնել է իրեն, բանավոր է: Մեր կարծիքով, եթե Երեմիան ունենար իր անունով Պետրոս Կաթողիկոսի գրավոր կտակը, ապա այն կներկայացներ Սուլեյման շահին, մինչդեռ հրովարտակում հստակ նշված է, որ Երեմիան հայտնել է, թե Պետրոս Խանձքեցին կաթողիկոսությունը հանձնել է իրեն և ներկայացրել միայն Աղվանքի հայ իշխանների գրավոր համախոսականը:

Հրովարտակը գրվել է 1675 թ. ապրիլ-մայիս ամիսներին, սակայն շահը Երեմիայի կաթողիկոսությունը հաստատում է «նապաստակի տարվա սկզբից», այսինքն՝ հետին թվով, նույն 1675 թ. փետրվարի երկրորդ կեսին:

XVIII դ. երկրորդ կեսին կազմված Աղվանից կաթողիկոսների գավազանագրքում Պետրոս Խանձքեցուց հետո հիշատակվում են ոչ միայն Սիմեոնն ու Երեմիան, այլև ոմն Մելիքսեթ Արեշեցի, որին գավազանագիրք կազմողը կեղծ կաթողիկոս է անվանում՝ հաղորդելով, որ նրա աթոռակալության թվերը իրեն հայտնի չեն[9]: Այս Մելիքսեթից հետո հերթականորեն նշված է Սիմեոնի անունը, որին կազմողը անվանում է «շնորհալի Հայրապետ Մեծ Կունեցի»*: Երեմիայի անունը տեղադրված է Սիմեոնի անունից հետո: Երեմիայի վերաբերյալ, որին գավազանագիրք կազմողը Երեմիա Ճալեցի է անվանում և նրա կաթողիկոսության սկիզբ է նշում 1676 թ., գրված է. «Հակառակեալ, անձամբ առեալ կաթուղիկոսութիւն ի միասին վարին չարչարանօք, որ խոտեալ աղճատեալ ոմն Եղիայ անուն եպիսկոպոս անուան կաթողիկոս եւ նա ձեռնադրէ Տէր Երեմիային անուանին կաթուղիկոս»[10]:

Այս գավազանագրքի համաձայն, Երեմիային անվանական-անօրինական կաթողիկոս է օծել ոմն Եղիա եպիսկոպոս, որը նույնպես անօրինական կերպով իրեն կաթողիկոս էր հորջորջում**, սրանից հետո Երեմիան, դեմ գնալով եկեղեցական կանոնադրությանը, Սիմեոնի հետ «չարչարանօք» է աթոռակալել: Ինչպես տեսնում ենք, այս աղբյուրը Երեմիա Հասան-Ջալալյանին է հակաթոռ համարում:

Չնայած Սիմեոն Երևանցին ևս Սիմեոնին անվանում է ինքնընծա և առանց Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հաստատման Գանձասարում աթոռակալած, սակայն միաժամանակ հետաքրքիր տեղեկություն է տալիս: Ըստ Սիմեոն Երևանցու, Սիմեոնը իրեն Գանձասարի կաթողիկոս հռչակելուց հետո լքում է կաթողիկոսանիստ Գանձասարի վանքը և, վերցնելով վանքի ամբողջ գույքը, տեղափոխվում իր հայրենի գյուղ՝ վայելելով մահմեդական մուլքադարի հովանավորությունը[11] (Մակար Բարխուդարյանցը նշում է Ջրաբերդի գավառի Թրղի գետի

---

[9] Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:

* Մեծ Կունենքը (Մեծկվենք, Մեծկուանք) տեղադրվում է Թարթառ գետի վերին ավազանում, Մռավ լեռան լանջերից հարավ-արևելք: Մեծ Կունենքի եպիսկոպոսական կենտրոնը Խարթավանքն էր:

[10] Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:

** Պետք է ենթադրել, որ Երեմիայի «օծումը» տեղի է ունեցել ոչ թե 1675-ին, այլ 1655 թվականից ոչ ուշ, երբ Երեմիան վիճարկում էր Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցուց:

[11] Սիմեոն Երևանցի. Ջամբռ: Վաղարշապատ, 1873, էջ 80:

ձորում գտնվող խոտորաշենը[12]): Այդ պատճառով Հակոբ Ջուղայեցին բանադրում է Սիմեոնին և, Աղվանքից Էջմիածին կանչելով ոմն Երեմիա արեղայի, նրան միաժամանակ ձեռնադրում եպիսկոպոս, ապա օծում Գանձասարի կաթողիկոս[13]: Սիմեոն Երևանցին Երեմիային արեղա է անվանում և գրում, որ Հակոբ Ջուղայեցին նրան եպիսկոպոս ձեռնադրելուց հետո է կաթողիկոս օծել: Այսինքն պետք է ենթադրել, որ Էջմիածինը չէր ճանաչում Եղիայի ձեռքով Երեմիայի կաթողիկոս օծվելը, հակառակ դեպքում նա միայն հաստատման կոնդակ և կամ Պետրոս Խանձբեցու նման կաթողիկոսական զավազան կստանար:

Սիմեոն Երևանցին չի տալիս Հակոբ Ջուղայեցու կողմից Երեմիա Հասան-Ջալալյանին Գանձասարի կաթողիկոս օծելու թվականը, այլ միայն նշում է, որ այն տեղի է ունեցել Սիմեոնի՝ կաթողիկոս օծվելուց և ապա աթոռանիստ Գանձասարի վանքը լքելուց ու հայրենի գյուղ՝ տեղափոխվելուց հետո* :

Շուշիի Ազուլեցոց եկեղեցում պահված Ավետարանի հիշատակարանը հաղորդում է. «Արդ, գրեցաւ վարդապիթիթ եւ ոսկեզօծ սուրբ եւ աստուածաշունչ Աւետարանս... ի թուականին Հայոց ՌՄԻԹ, ամսեան սեպտեմբերի, որոյ էին աւուրք Ժ (1680 թ. սեպտեմբերի 10), ի թագաւորութեան պարսից Շահ-Սուլէմանին եւ ի հայրապետութեան տանս Աղուանից Տեառն Երեմիայի սրբազան եւ նորընծայ կաթուղիկոսի»[14]:

Հիշատակարանի հեղինակը 1680 թ. սեպտեմբերին Երեմիային նորընծա կաթողիկոս է անվանում, երբ հայտնի է, որ դեռևս 1675 թվականին էր Երեմիան շահից կաթողիկոս հաստատվելու հրովարտակ ստացել:

Այս հիշատակարանի հաղորդումը կապելով վերը մեջբերված Սիմեոն Երևանցու տեղեկության հետ՝ կարող ենք եզրակացնել, որ Հակոբ Ջուղայեցու կողմից Երեմիային Գանձասարի կաթողիկոս օծելը տեղի է ունեցել 1680 թ. մոտ ընկած ժամանակահատվածում: Հակոբ Ջուղայեցին 1677 թ. Էջմիածնի խորհրդաժողովի որոշումներ իրականացնելու նպատակով արտասահման գնալու համար Վրաստան է եկել նույն 1677 թ.[15]: Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ 1677 թ. Վրաստանում Հակոբ Ջուղայեցին հանդիպել է Գանձասարի հակառակորդ կաթողիկոսներին՝ Սիմեոնին և Երեմիային, և հաշտեցրել նրանց[16]:

Այս ամենը միմյանց կապելով՝ թերևս կարելի է եզրակացնել, որ Երեմիան կաթողիկոս է օծվել կա՛մ Վրաստանում այս հանդիպման ժամանակ, կա՛մ քիչ ավելի վաղ:

Փորձենք ի մի բերել միմյանց միաժամանակ և՛ հակասող, և՛ լրացնող աղբյուրների այս հաղորդումները:

---

12 Մակար Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ: Թիֆլիս, 1907, էջ 68:

13 Նույն տեղում:

* Սիմեոն Երևանցին գրում է, որ Սիմեոն Խոտորաշենցին բանադրվել է Հակոբ Ջուղայեցու կողմից ոչ թե «ինքնընծա» կերպով Գանձասարի Կաթողիկոսական Աթոռը զբաղեցնելուց անմիջապես հետո, այլ այդ Աթոռը Գանձասարի վանքից տեղափոխելու համար: Սա կասկածի տեղիք է տալիս: Չէ՞ որ նույն Հակոբ Ջուղայեցին քիչ անց, 1677 թվականին, փորձում էր հաշտեցնել Սիմեոնին և Երեմիային: Հավանաբար նման բանադրանք չի եղել:

14 Կթղկ, դիվան, թղթ. 260, վավ. 130, էջ 2ա:

15 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ: էջ 208-209:

16 Նույն տեղում:

Պետրոս Խանձքեցին մահից առաջ Գանձասարի կաթողիկոսությունը սեփական կտակի համաձայն հանձնում է իր աշակերտ, Գանձասարի վանքի աթոռակալ, Գանձակի թեմի և նրանից Մոավի լեռներով բաժանված Մեծ Կուենքի կամ Բարդաբասանի եպիսկոպոս Սիմեոն Խոտորաշենցուն: Վերջինս Պետրոս Խանձքեցու մահից հետո, 1675 թ., մեկնում է Պարսկաստան և Սուլեյման շահի ու այդ ժամանակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի կողմից հաստատվում Գանձասարի կաթողիկոս: Երեմիա Հասան-Ջալալյանը, որը դեռ Պետրոս Խանձքեցուց էր փորձել խլել Կաթողիկոսական Աթոռը, հենվելով իր հորեղբայր Գրիգոր Կաթողիկոսի և Պետրոս Խանձքեցու՝ 1652 թ. համաձայնագրի, ինչպես նաև իր տոհմակից Հասան-Ջալալյանների ու Աղվանքի մի շարք աշխարհիկ և հոգևոր տերերի օժանդակության վրա, կաշառքով Բարդայի հաքիմ Աբասղուլի խանից[17] և Ղարաբաղի բեկլարբեկ, Գանձակի խան Ջիադ Օղլի Ուղուրլուից Հիջրայի 1087 թ. մուհարամ ամսին (1675 թ. մարտի 16 - ապրիլի 15)[18] ստանում է հրովարտակներ, որոնցով այդ խաները Գանձասարի կաթողիկոս էին ճանաչում Երեմիային և հրամայում իրենց ենթակա հայերին՝ հնազանդվել նրան:

Երեմիան տեղական իշխողներից իր կաթողիկոսական իշխանությունը հաստատող հրովարտակները ստանալուց հետո, գուցե նույն հնարքը բանեցնելով, 1675 թ. մայիսին իր կաթողիկոսությունը հաստատող հրովարտակ է ստանում նաև Սուլեյման շահից:

Երեմիայի և նրա կողմնակիցների հարաճուն ճնշման տակ Սիմեոն Խոտորաշենցին թողնում է իր աթոռանիստ Գանձասարի վանքը և, ստանալով իր ծննդավայր Խոտորաշեն գյուղի մուսուլման մուլքադարի աջակցությունը, տեղափոխվում այնտեղ:

Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը, որն աջակցության խիստ կարիք ուներ և այդ պատճառով չէր կարող հաշվի չառնել հզոր և հայ իրականության մեջ մեծ համարում ունեցող Խաչենի Հասան-Ջալալյան մելիքական տան և նրանց կողմնակիցների ձգտումները, հավանաբար 1677 թ. կաթողիկոս է օծում Երեմիա Հասան-Ջալալյանին:

Գանձասարի կաթողիկոսության թեմերը երկփեղկվեցին՝ բաժանվելով երկու հակամարտ հայրապետների միջև: Սիմեոն Խոտորաշենցուն կաթողիկոս էին ճանաչում Գանձակի, Ծաքիի և Շամախու թեմերը, Երեմիային՝ Ղարաբաղի թեմերը[19]:

Վերը նշեցինք, որ Հակոբ Ջուղայեցին 1677 թ. Վրաստանում հանդիպել է Գանձասարի հակառակորդ հայրապետներին և հաշտեցրել նրանց: Այդ հանդիպման արդյունքում Սիմեոն Խոտորաշենցին 1677 թ. օգոստոսի 25-ին թվագրված պարտավորագիր է տալիս առ այն, որ իր մահից հետո իր ժառանգները զրկվելու են կաթողիկոս դառնալու իրավունքից: Կաթողիկոսության ժառանգականությունը վերապահվում է Հասան-Ջալալյաններին: Սիմեոնը հայտնում է նաև, որ ինքը թուղթ է տվել Հակոբ Ջուղայեցուն, ըստ որի պարտավորվել է ենթարկվել ու հնազանդվել նրան[20]:

---

17 Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 83:
18 Նույն տեղում, վավ. 47:
19 Ձեռագիր № 4331, էջ 12ա:
20 Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 1:

Վավերագրում խոսք է լինում նաև Գանձասարի կաթողիկոսության վերաբերյալ Սիմեոնի և Երեմիայի միջև կայացած համաձայնագրի մասին, որը հաստատվել է Հակոբ Ջուղայեցու կողմից[21]: Թե ինչ հարցեր էին շոշափվում այդ համաձայնագրում, վավերագրում չի ասվում: Այդ մասին տեղեկանում ենք Վարդան Օձնեցուց, որը գրում է. «Եւ ձեռագիր Սիմէօն Կաթուղիկոսն Աղուանից ի թուին Հայոց ՌՄԻԶ օգոստոսի ԻԵ (1677 թ. օգոստոսի 25), զի ինքն, որքան կենդանի է, վարեսցէ իշխանութիւն կաթուղիկոսութեան ի վերայ մասին Աղուանից՝ Շիրուանայ, Շաքուայ եւ Գանձակայ»[22]:

Փաստորեն Գանձասարի կաթողիկոսությունը բաժանվում էր երկու մասի՝ Շիրվանի, Շաքիի և Գանձակի թեմերը տրվում էին Սիմեոն Խոտորաշենցուն, Ղարաբաղի թեմերը՝ Երեմիա Հասան-Ջալալյանին:

Հակոբ Ջուղայեցու այս որոշումից դժգոհ Երեմիան, օգտվելով այն հանգամանքից, որ Հակոբ Ջուղայեցին 1677 թ. առանց շահից թույլտվություն ստանալու մեկնել էր Վրաստան, այնտեղից էլ Թուրքիա և այդ պատճառով վարկաբեկվել պարսկական կառավարության աչքում[23], Ղարաբաղի բեկլարբեկ Աբաս-Ղուլի խանից Հիջրայի 1090 թ. ռարի ալ ավալ ամսին (1679 թ. ապրիլի 12 - մայիսի 12) ստանում է հրովարտակ՝ ուղղված Ղարաբաղի, Գանձակի և Շիրվանի հայերին, որտեղ Աբաս-Ղուլի խանը հրամայում էր հնազանդվել Երեմիա Կաթողիկոսին և թալիբանեն (հոգևոր տուրքերը - Լ. Մ.) հանձնել նրան[24]: Նույն տարում Շաքիի Հուսեյն խանն իր խանության հայերին հրամայում է հնազանդվել Երեմիային[25]:

Սիմեոն Խոտորաշենցին նույնպես խախտում է Հակոբ Ջուղայեցու միջնորդությամբ կայացված համաձայնությունը՝ Երեմիայի գավազանի տակ գտնվող Ջրաբերդի գավառում կառուցելով և 1691 թ. օծելով իր աթոռանիստ Երից Մանկանց վանքը[26]: Թերևս Սիմեոն Խոտորաշենցու կողմնակիցները թույլ չեն տալիս Երեմիա Կաթողիկոսի կողմից Ղուզահի* կոչվող գավառակի գյուղերի քորեպիսկոպոս նշանակված Հակոբ Վարդապետին հաստատվել այդ գյուղերի առաջնորդանիստում, այդ պատճառով վերջինս 1682 թ. ստիպված էր կառուցել Ծակուռի գյուղի եկեղեցին և հաստատվել այնտեղ[27]:

Պոլսում 1680 թ. մահացած Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն հաջորդում է Եղիազար Այնթապցին, որի մասին 1689 թ. մի հիշատակարանում հաղորդվում է, թե կաթողիկոսում էր «բուռն իշխանութեամբ», և որ «ի գալն նորայ

---

21 Նույն տեղում:

22 Ձեռագիր № 4331, էջ 12բ:

23 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ.: էջ 294:

24 Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 93:

25 Նույն տեղում, վավ. 95:

26 Դիվան, արձանագրություն № 300, էջ 96:

* «Ղուզի» թուրքերեն բառ է, որ նշանակում է ոչ արևահայաց, այստեղ Տող լեռան հյուսիսային լանջին ընկած գյուղերն են, նույն լեռան հարավային լանջի գյուղերից բաղկացած գավառակն անվանվում էր Գյունե՝ թուրքերեն՝ հարավ:

27 Դիվան, արձանագրություն № 600, էջ 172-173:

դդրդումն եղև համայն արևելեանս, որ եւ ահարկու եղեն ազգն մահմեդականի»[28]: Եղիազար Այնթապցին, օգտագործելով Վարանդայի, Դիզակի և Խաչենի մելիքների՝ իրեն ուղղված դիմումը, որտեղ հայտնվում էր, թե միայն Երեմիա Հասան-Ջալալյանին են ճանաչում Գանձասարի կաթողիկոս և պահանջում են բանադրել Սիմեոնին[29], Էջմիածնին է ենթարկվում Պետրոս Խանձքեցու ժամանակ Գանձասարի կաթողիկոսությանն անցած Շաքիի ու Շամախու թեմերը: Եղիազարի հրամանով Էջմիածին եկած Սիմեոն Խոտորաշենցին պարտավորվում է «առանց վարելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ըստի հանդարտ ի վանս իւր»[30]:

Այս պարտավորությունը, սակայն, Սիմեոնը չի կատարում, քանի որ 1690 թ. մարտի 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Եղիազար Այնթապցին Շաքիի ու Շիրվանի հայերին ուղղված կոնդակում գրում է, որ Սիմեոնը, երդմնազանց լինելով, մեռոն է օրհնել, եպիսկոպոս ձեռնադրել և ստացել Շաքիի ու Շիրվանի թեմերի ութ թումանց գումար կազմող եկեղեցական արդյունքները, որոնք Եղիազարը պահանջում է հանձնել Էջմիածնին: Անդրադառնալով Գանձասարի կաթողիկոսությունում տիրող երկպառակությանը՝ Եղիազար Կաթողիկոսը նույն կոնդակում գրում էր. «Երեմիայն և Սիմէօնն եթէ միաբան մնան ի Գանձասար, բարի՛ է, եթէ ո՛չ, և ո՛չ մինն չէ կաթողիկոս»[31]: Ինչպես տեսնում ենք, ինքը՝ Եղիազար Այնթապցին, շարունակելով Էջմիածնինը համարել Շաքիի և Շամախու թեմերը, ուժը կորցրած էր համարում կաթողիկոսությունից հրաժարվելու Սիմեոնի պարտավորագիրը: Եղիազար Այնթապցու համար պարզ պետք է լիներ, որ Սիմեոնն ու Երեմիան չեն կարող միատեղ նստել Գանձասարի վանքում և համատեղ կաթողիկոսել: Եղիազարը նման պահանջ առաջ քաշելով ոչ թե փորձում էր վերջ տալ երկպառակտությանը, այլ ջանում էր այդ երկպառակտչական պայքարից թուլացած Գանձասարի կաթողիկոսությունը ենթարկել Էջմիածնին և այդ կաթողիկոսության Անդրկուրյան հարուստ թեմերը վերջնականապես ամրացնել Էջմիածնին:

Շաքիի ու Շամախու թեմերին ուղղված այս կոնդակին հետևում է Եղիազար Այնթապցու՝ Գանձասարի կաթողիկոսության բոլոր թեմերին ուղղված կոնդակը, որով արգելվում էր եկեղեցական արդյունքները Սիմեոն Խոտորաշենցու ձվիրակներին հանձնել[32]:

Դրա հետևանքով՝ Սիմեոն Խոտորաշենցուն ենթարկվող մի քանի թեմերի առաջնորդներ երես են թեքում նրանից և նրա հակառակորդների հետ 1691 թ. փետրվարի 10-ին կազմում համախոսական, որտեղ հայտարարում են, որ Գանձասարի կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիային և պարտավորվում են եկեղեցական հասույթներն ամբողջովին հանձնել նրան, իսկ Սիմեոնին, որն իր հավաքած գումարները «իւր հօր տանն է մսխում և այլ տեղ կորուսանում... դուրս անիմք մեր մէջէն, ուր կամի գնայ»[33]:

---

28 Ձեռագիր № 1512, էջ 594բ:

29 Ձեռագիր № 4331, էջ 13ա:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, էջ 13ա-13բ:

32 Ձեռագիր № 4331, էջ 13բ:

33 Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 2:

Համախոսականը կնքել էին Քոչիզի մելիք Փիրումը, Ջրաբերդի մելիք Հախիջանը, Ծամբորի մելիք Միրզախանը, հինգ եպիսկոպոսներ, այդ թվում՝ Փառիսոսի եպիսկոպոս և Ծամբորի առաջնորդ Բարսեղը, Մեծ Արանից Սուրբ Հակոբի վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը և Ծարի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը, որոնք մինչ այդ ենթարկվում էին Սիմեոն Կաթողիկոսին: Վերջինս ստիպված էր թողնել Ջրաբերդի գավառում գտնվող իր նորակառույց Երից Մանկանց վանքը և ապաստանել Ամարասի վանքում՝ ստանալով Վարանդայի մելիքի* աջակցությունը[34]:

Սիմեոն Խոտորաշենցին, տեսնելով, որ Էջմիածինը հակված է իր հակառակորդ Երեմիա Հասան-Ջալալյանի կողմը, փորձում է ստանալ Վատիկանի օժանդակությունը՝ կանգ չառնելով նույնիսկ դավանափոխության առջև: Տաշյանի կազմած ձեռագրերի ցուցակում[35] առկա է եկեղեցական գրքերի տպագրության համար Հակոբ Ջուղայեցու կողմից Եվրոպա ուղարկված և 1664 թ. կաթոլիկություն ընդունած Ոսկան վարդապետ Երևանցու վկայությունը, համաձայն որի, 1688 թ. Աղվանից Ազարիա Կաթողիկոսը** մի քանի եպիսկոպոսների համակամությամբ դավանագիր է ուղարկել Իննոկենտիոս ԺԱ Պապին (1676-1689):

Կաթոլիկություն ընդունելու առաջարկ Վատիկանից արվում է նաև Երեմիային, որն Աղվանից Աբաս Կաթողիկոս է անվանվում, սակայն վերջինս մերժում է՝ պատասխանելով, թե «Յառաջագոյնքն իմ՝ Պետրոս եւ Գրիգոր կաթողիկոսունք ոչ ընկալան զայդոսիկ, եւ ես ոչ ընդունիմ»[36]: 1695 թ. Սիմեոն Խոտորաշենցին կրկին դիմում է Վատիկանին՝ այժմ Իննոկենտիոս ԺԲ Պապին (1691-1700)՝ խնդրելով միջնորդել իր օգտին Սուլթան-Հուսեյն շահի առաջ և պաշտպանել իր իրավունքները Երեմիա Հասան-Ջալալյանի դեմ: Պապը բավարարում է այդ խնդրանքը[37]: Ծամախում հաստատված ճիզվիտական օրդենի ներկայացուցիչներից մեկը 1702 թ. անգամ գրում էր, որ Սիմեոն Կաթողիկոսը կաթոլիկ է, սակայն գաղտնի է պահում այդ փաստը[38]:

Երեմիա Հասան-Ջալալյանը վախճանվում է 1700 թ., երկու տարի անց՝ 1702 թ. վերջին, իր մահկանացուն է կնքում նաև Սիմեոն Խոտորաշենցին[39]: Մինչ այդ, սակայն, երկու Կաթողիկոսներն իրենց հաջորդներ են օծում. Երեմիա Հասան-Ջալալյանը՝ Եսայուն, որն իր եղբայր Վելիջանի որդին էր[40], Սիմեոն Խոտորաշենցին էլ՝ իր ազգական Ներսեսին:

---

* Վարանդացի մելիքը XVII դ. 90-ական թվականներին Մելիք Շահնազար Ա-ի որդի Մելիք Բաղին էր (**Մակար Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 24):

[34] Ձեռագիր № 4331, էջ 13բ:

[35] Յակոբոս վարդապետ Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց: Վիեննա, 1895, էջ 113:

** Ազարիան Բաբելոնում կրակե հնոցը նետված երեք մանուկներից մեկն է (Դանիել Ա, 7) և աստվածաշնչյան այս կերպարի անունով է Ոսկան Երևանցին կոչում Երից Մանկանց վանքում նստող Սիմեոն Կաթողիկոսին:

[36] **Յակոբոս վարդապետ Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 113:

[37] **Ալիշան**, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 145:

[38] Письма и донесения иезуитов о России, конца XVII и начала XVIII века, СПб, 1904, с. 294.

[39] **Աշ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 293:

[40] **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Ե, 1944, էջ 144:

Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ այդ օծումը տեղի է ունեցել Սիմեոն Խոտորաշենցու կաթողիկոսության վերջին տարում՝ 1702 թ.[41]: Սիմեոն Երևանցին Ներսեսի օծման տարի է համարում 1706 թ.՝ նշելով նույն տարեթիվը որպես Եսայու հայրապետության հինգերորդ տարի. «Ի հիգերորդ ամ կաթուղիկոսութեան Եսայեայ, Ներսէս անուն ոմն սեւգլուխ յազգէ վերոյիշեալ բանադրեցեալ Սիմէօն Կաթուղիկոսին, ի յԱղուանս կաշառօք եւ խաբէութեամբ օծանի կաթուղիկոս՝ խոչ եւ աստան Եսայեա ի ՌՇԾԵ թուոջ մերում»[42]: Ըստ այս մեջբերման, Եսային կաթողիկոս է դարձել 1701 թ., սակայն իր աշխատության նախորդ էջում գրում է, որ Սիմեոն Երևանցին «նստի յԱղուանս ի ՌՇԾԱ թուոջն»[43]: Այստեղից պետք է եզրակացնել, որ Սիմեոն Երևանցին առաջին դեպքում Եսայու հայրապետության սկիզբ է համարել Երեմիա Կաթողիկոսի մահվան հաջորդ տարին, իսկ երկրորդ դեպքում՝ Եսային օծվել է Սիմեոն Խոտորաշենցու վախճանվելուց հետո: Վարդան Օձնեցին Եսայու աթոռակից կաթողիկոս օծվելու տարեթիվ է համարում 1695 թ.: Եթե այս թվականը համարենք Եսայու կաթողիկոսության առաջին տարին, ապա Եսայիի կաթողիկոսության հինգերորդ տարի և Ներսեսի օծման տարեթիվ է դառնում 1700 թ., որը, ըստ տվյալների համադրման, Ներսեսի կաթողիկոս օծվելու ամենահավանական թվականն է:

Առաջինը Երեմիան է 1695 թ. «հրամանաւ Նահապետ Կաթողիկոսին» աթոռակից օծում Եսայուն[44], որը դեռ Երեմիայի կենդանության օրոք Հիջրայի 1111 թ. ռամազան ամսին (1700 թ. փետրվարի 20 - մարտի 22) դիմում է Սուլթան-Հուսեյն շահին՝ բողոքելով, որ Ղարաբաղի, Գանձակի, Զարզբիլի (ներկայիս Քելբաջարի շրջան) և Շիրվանի մուսուլման ֆեոդալները կրոնական ճնշման և հալածանքի են ենթարկում այդ գավառների հայկական համայնքներին: Սուլթան-Հուսեյնը, համաձայն Սուլեյման շահի կողմից Պետրոս Խանձքեցուն տրված հրովարտակի, հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին (Ղարաբաղի բեկլարբեկն էր Քալբալի խանը. 1694-1705), օժանդակել Եսայի Կաթողիկոսին և վերջ դնել կրոնական հալածանքներին[45]: Այս հրովարտակի հետ միաժամանակ շահը հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին պատժել ոմն Սեֆի-Ղուլի բեկի թոռ Իսմայիլին, որը շարունակաբար անհանգստություն է պատճառում Եսայի Կաթողիկոսին, խառնվում եկեղեցական կառավարման խնդիրներին, վանքապատկան գյուղերից հարկ պահանջում[46]:

41 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 293:

42 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ 1873, էջ 81-82:

43 Նույն տեղում: էջ 81:

44 Ձեռագիր № 4331, էջ 14ա:

45 Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 131:

46 Ձեռագիր № 4331, Կթղկ. դիվան, էջ 14ա, թղթ. № 2բ, վավ. 134: